



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. մայիսին /վերլուծություն/

2007թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 11241 գործարքներ, որոնց քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 3.5%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ աճել՝ 5.5%-ով:

2007թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4463 օտարման գործարքների 86.3% կազմել են առուվաճառքները, 13.1%՝ նվիրատվությունները և 0.6%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.3%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.9% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. մայիսին, 2007թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 0.4%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ՝ 2.7%-ով:

2007թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.7% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 7.9%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ նվազել՝ 7.6%-ով:

2007թ. մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2006թ.	մայիս 2007թ.	ապրիլ 2007թ.
Կենտրոն	368100	453600	439700
Արաբկիր	291200	362500	346800
Քանաքեռ-Զեյթուն	175500	261200	250800
Նոր-Նորք	164900	225200	219000
Ավան	146600	209400	201700
Էրեբունի	144700	217600	212600
Շենգավիթ	173400	234700	227700
Դավթաշեն	180900	240100	233400
Աջափնյակ	164600	230100	221500
Մալաթիա-Սեբաստիա	161500	216900	207000
Նուբարաշեն	105700	122000	120000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	188800	252100	243700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. ապրիլի համեմատ աճել են 3.4%:

2007թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 453 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 13.9%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ՝ 1.5%-ով:

2007թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2006թ.	մայիս 2007թ.	ապրիլ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	60200	102400	97600
	Ապարան	25900	28600	28500
	Թալին	23200	36100	35000
Արարատ	Արտաշատ	45400	81500	77800

	Մասիս	53900	88700	84900
	Վեդի	37200	58100	57000
	Արարատ	39400	54600	54600
Արմավիր	Վաղարշապատ	78700	125600	119800
	Արմավիր	52400	86300	83700
	Մեծամոր	33500	56600	54500
Գեղարքունիք	Սևան	32600	58700	56000
	Գավառ	24800	33600	33600
	Մարտունի	38600	48900	48900
	Վարդենիս	20300	26200	26200
	Ճամբարակ	13200	14700	14200
Լոռի	Վանաձոր	47000	69600	67000
	Ստեփանավան	24100	33700	32300
	Սպիտակ	32700	44800	43900
	Ալավերդի	20400	24900	24200
	Տաշիր	19400	24000	23400
	Թումանյան	5100	5400	5400
	Շամլուղ	2700	3000	3000
	Ախթալա	10100	11600	11600
Կոտայք	Աբովյան	89000	140300	134400
	Նոր Հաճն	60100	95300	93800
	Բյուրեղական	42600	70100	67500
	Եղվարդ	55600	85700	83100
	Հրազդան	34700	47700	47700
	Ծաղկաձոր	70500	89600	87000
	Չարենցավան	38900	58900	56640
Շիրակ	Գյումրի	46300	66200	64400
	Արթիկ	29700	42800	41500
	Մարտիկ	21100	24800	24100
Սյունիք	Գորիս	51700	69500	67500
	Կապան	39500	63100	60900
	Սիսիան	32400	50600	50600
	Մեղրի	26400	36900	35600
	Ագարակ	19500	23900	23300
	Քաջարան	24400	31000	31000
	Դաստակերտ	6200	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	33700	55400	55400
	Եղեգնաձոր	52200	70300	67100
	Ջերմուկ	59600	102800	102800
Տավուշ	Դիլիջան	41500	63600	61000
	Իջևան	49100	85800	82300
	Բերդ	29700	33000	33000
	Նոյեմբերյան	16100	27800	27800
	Այրում	18000	18000	18000

2007թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. ապրիլի համեմատ աճել են 2.8%:

2007թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 506 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 94, մյուս մարզերում միասին վերցրած՝ 412: 2007թ. ապրիլի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.8%-ով, ընդ որում Երևանում՝ 13.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 1.4%-ով: 2006թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է

10.5%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 3.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 14.1%-ով:

2007թ. մայիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2006թ.	մայիս 2007թ.	ապրիլ 2007թ.
Կենտրոն	383300	462700	444700
Արաբկիր	296300	365200	351400
Քանաքեռ-Զեյթուն	178900	264000	254400
Նորք-Մարաշ	185000	227700	222600
Ավան	148800	211800	206500
Էրեբունի	147500	222500	220000
Շենգավիթ	175200	236900	231700
Դավթաշեն	183300	244300	241500
Աջափնյակ	167000	233900	226300
Մալաթիա-Սեբաստիա	164400	220100	210500
Նուբարաշեն	106700	125600	123100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	194200	255900	248400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. ապրիլի համեմատ աճել են 3.0 % :

2007թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2006թ.	մայիս 2007թ.	ապրիլ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	64200	104700	100900
	Ապարան	27300	33000	33000
	Թալին	24500	38900	37900
Արարատ	Արտաշատ	46600	84300	80300
	Մասիս	55000	91300	88700
	Վեդի	38500	61000	59900
Արմավիր	Արարատ	40700	59200	58600
	Վաղարշապատ	80000	127400	121900
Արմավիր	Արմավիր	53900	89600	88000
	Սևան	37300	60700	59500
Գեղարքունիք	Գավառ	26100	37800	37100
	Մարտունի	39800	52800	51800
	Վարդենիս	21700	30100	29500

	Ճամբարակ	14600	17300	17100
Լոռի	Վանաձոր	48300	73900	71900
	Ստեփանավան	26200	37800	37300
	Սպիտակ	34000	48800	48200
	Ալավերդի	21900	28900	27900
	Տաշիր	20900	27000	26600
	Թումանյան	6700	8100	7800
	Շամլուղ	4200	5200	5000
	Ախթալա	11600	14200	13700
Կոտայք	Աբովյան	91000	144000	139800
	Նոր Հաճն	61300	102400	101000
	Բյուրեղավան	43800	72600	70400
	Եղվարդ	56700	89800	87000
	Հրազդան	36200	52300	51300
	Ծաղկաձոր	72200	118200	109000
	Չարենցավան	39900	60400	58900
Շիրակ	Գյումրի	47900	70800	67800
	Արթիկ	30800	45200	44800
	Մարալիկ	22900	27400	27100
Սյունիք	Գորիս	52900	72200	70100
	Կապան	40600	65500	64100
	Սիսիան	33500	55100	54500
	Մեղրի	27500	39600	39300
	Ագարակ	21000	26600	26600
	Դաստակերտ	8500	9600	9600
Վայոց Ձոր	Վայք	35000	59300	58500
	Եղեգնաձոր	54000	71200	69600
	Ջերմուկ	35700	50600	48300
Տավուշ	Դիլիջան	42500	67200	65200
	Իջևան	50400	86700	84900
	Բերդ	31100	36300	35900
	Նոյեմբերյան	17100	30900	30100
	Այրում	19200	19200	19200

2007թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. ապրիլի համեմետ աճել են 2.7%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1772 միավոր /1106.96 հա/ հողեր, որից Երևանում՝ 143 միավոր /14.61 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 111 միավոր /6.50 հա/ հողեր, որից Երևանում՝ 54 միավոր /4.53 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 773 միավոր /1014.53 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /3.39 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 629 միավոր /55.02 հա/, որից Երևանում՝ 91 միավոր /6.94 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 347 միավոր /30.10 հա/, որից Երևանում՝ 42 միավոր /2.09 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /4.50 հա/, որից Երևանում՝ 1 միավոր, /2.20 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 9 միավոր /2.61 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 2 միավոր /0.20 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1690 միավորի /1069.17 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 132 միավոր /13.79 հա/, նվիրատվության գործարքներ՝ 78 միավորի /36.92 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /0.82 հա/ և փոխանակության գործարքներ՝ 4 միավորի /0.87 հա/:

Հանրապետությունում 2007թ. մայիսին, 2006թ. մայիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 3.9%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 6.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 45.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 303.43 հա, որից 297.19 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 41.5% կամ 701 գործարքներ /513.66 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 49 գործարքներ /5.05 հա/, իսկ 58.0% կամ 981 միավորը /528.91 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 80 միավոր /8.69 հա/: 2007թ. հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /26.60 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	0	0.00	1	2.20	27	1.82	21	1.04	9	3.39	0	0.00	55	4.40	16	0.89								
Արագածոտն	96	198.82	1	0.14	4	0.72	19	0.36	60	98.37	0	0.00	48	4.98	4	0.03								
Արարատ	24	42.98	3	0.93	16	1.54	42	2.90	80	35.64	1	0.20	76	7.05	11	0.79								
Արմավիր	18	66.15	1	0.47	2	0.11	17	0.34	87	187.54	1	0.11	89	7.57	3	0.05								
Գեղարքունիք	8	7.46	0	0.00	6	0.62	57	13.80	10	7.94	0	0.00	8	0.91	1	0.003								
Լոռի	0	0.00	1	0.06	1	0.13	15	0.17	30	15.45	0	0.00	5	0.28	0	0.00								
Կոտայք	92	146.03	0	0.00	32	2.81	58	6.11	115	68.42	0	0.00	142	13.17	9	0.23								
Շիրակ	2	0.06	1	0.14	41	1.20	26	1.23	8	12.80	0	0.00	5	0.83	1	0.05								
Սյունիք	0	0.00	1	0.21	1	0.07	7	0.25	9	11.54	0	0.00	4	0.22	2	0.02								
Վայոց Ձոր	4	8.10	0	0.00	0	0.00	7	0.12	17	19.92	0	0.00	10	0.97	4	0.02								
Տավուշ	9	1.14	1	0.04	15	1.37	16	0.34	49	22.78	0	0.00	8	0.63	2	1.14								
Ընդամենը	253	470.74	10	4.19	145	10.39	285	26.66	474	483.79	2	0.31	450	41.01	53	3.22								

Ստորև ներկայացվում է 2007թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	29	3.13	1	2.20	10	0.25	18	0.68	20	1.93	0	0.00	0	0.00	17	1.57	3	0.36
Արագածոտն	3	0.07	0	0.00	0	0.00	3	0.07	117	199.97	96	198.82	1	0.14	4	0.72	16	0.29
Արարատ	3	0.015	0	0.00	1	0.01	2	0.005	82	48.33	24	42.98	3	0.93	15	1.53	40	2.89
Արմավիր	7	0.18	0	0.00	0	0.00	7	0.18	31	66.89	18	66.15	1	0.47	2	0.11	10	0.16
Գեղարքունիք	10	0.97	0	0.00	1	0.16	9	0.81	61	20.92	8	7.46	0	0.00	5	0.46	48	13.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	17	0.36	0	0.00	1	0.06	1	0.13	15	0.17
Կոտայք	9	1.24	0	0.00	2	0.09	7	1.15	173	153.71	92	146.03	0	0.00	30	2.73	51	4.95
Շիրակ	11	0.26	0	0.00	3	0.08	8	0.18	59	2.36	2	0.06	1	0.14	38	1.11	18	1.05
Սյունիք	4	0.29	1	0.21	1	0.07	2	0.01	5	0.24	0	0.00	0	0.00	0	0.00	5	0.24
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	8.22	4	8.10	0	0.00	0	0.00	7	0.12
Տավուշ	7	0.29	0	0.00	1	0.10	6	0.19	34	2.60	9	1.14	1	0.04	14	1.27	10	0.15
Ընդամենը	83	6.445	2	2.41	19	0.76	62	3.28	610	505.53	253	470.74	8	1.78	126	9.63	223	23.38

Հանրապետությունում 2007թ. մայիսին 2006թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 54.3%-ով: Ընդ որում Երևանում աճել է 6.7 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 50.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 34.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 93.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 60.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 60.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

արածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	88	153.52	35.3	3600.0	397.4	42	76.86	362.2	6772.5	2588.1
Ապարան								90.6	767.6	358.2
Թային	8	45.30	34.1	130.0	58.9	17	21.31	90.6	758.5	380.4
Ծաղկահովիտ								77.0	948.2	168.2

Արարատի մարզ										
Արտաշատ	5	24.58	43.8	611.4	348.3	24	8.04	335.1	5418.0	1395.5
Մասիս	13	12.10	34.5	2400.0	442.7	20	8.28	181.1	6772.5	1784.9
Վեդի	6	6.30	40.0	190.0	91.4	34	18.76	203.8	4515.0	1198.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	12.25	47.7	62.3	55.5	17	8.10	294.3	4063.5	873.2
Բաղրամյան	13	48.11	35.4	622.1	218.1	28	154.58	90.6	677.3	553.5
Վաղարշապատ	3	5.79	35.6	191.7	99.4	38	20.99	443.7	9030.0	1509.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	1.67	190.2	496.7	364.7
Ճամբարակ	1	1.00	364.0	364.0	364.0	2	0.46	45.3	541.8	146.5
Մարտունի								45.3	1806.0	470.2
Սևան								45.3	451.5	192.1
Վարդենիս	7	6.46	456.7	474.4	462.8	3	5.81	27.2	532.8	242.3
Լոռու մարզ										
Այվերդի						21	12.30	163.0	2483.3	1050.8
Գուգարք								226.4	2709.0	921.0
Սպիտակ						3	0.62	226.4	1490.0	512.8
Ստեփանավան						1	1.60	90.6	2257.5	361.0
Տաշիր						5	0.92	45.3	451.5	203.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	21	19.70	53.3	5500.0	789.9	42	11.80	271.7	11287.5	3210.7
Եղվարդ	49	109.30	47.6	2234.6	352.7	60	47.24	172.1	11287.5	2306.3
Հրազդան	22	17.03	73.8	1260.0	240.4	13	9.38	113.2	2709.0	900.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	0.88	249.0	1693.1	444.8
Ամասիա						2	5.69	36.2	237.0	113.1
Անի								108.7	361.2	232.3
Աշոցք								45.3	165.0	116.8
Արթիկ	2	0.06	330.0	330.0	330.0	2	0.54	63.4	1083.6	172.2
Սյունիքի մարզ										
Գորիս						6	9.95	90.6	673.3	338.1
Կապան						2	1.49	54.3	841.6	224.1
Մեղրի						1	0.10	181.1	1784.2	455.4
Սիսիան								45.3	631.2	221.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	8.10	155.4	572.5	468.2	9	10.33	117.7	2524.8	1275.5
Վայք						8	9.59	54.3	1430.7	508.8
Տավուշի մարզ										
Բերդ						8	2.32	45.3	841.6	352.4
Իջևան	9	1.14	450.0	1860.0	748.4	6	2.64	240.0	1683.2	800.5
Նոյեմբերյան						35	17.83	45.3	3509.5	516.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. մայիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի արդյունքում վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միջին գների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միջին գների քանակը	Մակերեսը /քմ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	7200.0	115.0	116.7	115.8	45	44805.0	113.2	3612.0	2285.7
Ապարան								113.2	632.1	187.3
Թալին								45.3	361.2	92.3
Ծաղկահովիտ						3	4990.0	45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	11	11490.0	147.0	626.0	426.2	19	20578.0	135.8	2709.0	886.1
Մասիս	4	3820.0	279.3	980.2	564.3	41	34810.0	135.8	9030.0	1128.1
Վեդի						11	12236.0	113.2	993.3	642.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	16408.0	135.8	2257.5	1065.4
Բաղրամյան						3	3600.0	81.5	270.9	127.8
Վաղարշապատ	2	1120.0	3828.0	3828.0	3828.0	66	54692.0	135.8	4515.0	1421.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	5720.0	135.8	903.0	351.3
Ճամբարակ								45.3	135.5	94.8
Մարտունի	3	3000.0	58.3	66.7	62.8	3	2560.0	90.6	451.5	228.8
Սևան	2	1600.0	187.4	428.5	307.9	1	800.0	90.6	903.0	141.3
Վարդենիս								45.3	225.8	102.4
Լոռու մարզ										
Ալավերդի						1	970.0	67.9	270.9	122.5
Գուգարք								67.9	2347.8	530.2
Սյիտակ	1	1300.0	214.7	214.7	214.7	1	1000.0	63.4	451.5	121.9
Ստեփանավան						2	460.0	45.3	270.9	100.1
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	20	18740.0	2295.0	2425.0	2343.1	70	60565.0	135.8	6772.5	1722.8
Եղվարդ	1	400.0	4749.0	4749.0	4749.0	64	63593.0	135.8	6772.5	1852.3
Հրազդան	9	8113.0	146.0	1539.1	301.1	7	6570.0	135.8	9030.0	1210.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	36	10430.0	277.3	23333.3	2851.1	3	3427.5	113.2	1535.1	322.5
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	94.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	2	700.0	40.0	75.0	57.5	2	4850.0	67.9	925.6	157.1
Սյունիքի մարզ										
Գորիս						1	326.0	67.9	541.8	230.3
Կապան						3	1920.0	67.9	632.1	200.9
Մեղրի								67.9	406.4	112.2
Միսիան								67.9	406.4	132.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	8057.0	67.9	1128.8	278.5
Վայք								77.0	632.1	114.7
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	14	12711.0	283.5	2200.0	2008.1	5	4059.0	67.9	1354.5	388.5
Նոյեմբերյան						3	2270.0	45.3	632.1	125.9

2007թ. մայիսին հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք /0.10 հա մակերեսով/ Գեղարքունիքի մարզում:

2007թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 767 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցումների քանակի 6.8%: Ընդ որում, վարձակալության գործարքների 45.6% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. մայիսին 2007թ. ապրիլի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 9.9%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ աճել՝ 2.7%-ով:

2007թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 54 բնակարանների, 24 անհատական բնակելի տների, 290 հասարակական, 39 արտադրական նշանակության օբյեկտների, 356 միավոր /3403.96 հա/ հողերի և 4 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների /այդ թվում 16 միավոր /1.55 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 17.9%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ աճել՝ 91.7%-ով:

2007թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 3403.96 հա հողերից 6.88 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3397.08 հա հողերի 16.64 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 2.32 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 1560.27 հա, որից 1270.21 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1258.00 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	3	580.00	29	690.21
Արարատ	0	0.00	19	109.54
Արմավիր	0	0.00	15	25.50
Գեղարքունիք	7	258.00	45	67.29
Լոռի	0	0.00	33	181.08
Կոտայք	1	420.00	4	12.55
Շիրակ	0	0.00	28	128.36
Սյունիք	0	0.00	7	553.04
Վայոց Ձոր	0	0.00	1	2.00
Տավուշ	0	0.00	4	3.98
Ընդամենը	11	1258.00	185	1773.55

2007թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1906 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.0%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 4.1%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ աճել՝ 52.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.4%/, առանձնատների /24.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.1%/ և հողերի /12.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 788 գրավադրման գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 2.0%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ աճել՝ 22.7%-ով:

2007թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 847.09 հա հողեր, որից 3.40 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 92.2% կամ 781.39 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 543.40 հա, որից 543.08 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 9 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. ապրիլի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 85.7%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ նվազել՝ 43.5%-ով: 2007թ. մայիսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 23.1-ական%՝ Կոտայքի և Շիրակի, 15.4-ական %՝ Երևանի, Արարատի և Տավուշի, 7.7%՝ Սյունիքի մարզերում:

2007թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1786 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. ապրիլի համեմատ նվազել է 6.8%-ով, իսկ 2006թ. մայիսի համեմատ՝ 3.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /48.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն